



ԲԱՆՍԱՎԼԻ

ԲԱՐՅԱԿԱՆ

Յ Ե Յ Ե Ր

ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹԻՍ յարգելի ընթերցող-
ներէն ոմանք՝ զանազան դարձուածներու ներ-
քիւ գրեր են ինձ՝ որ ոչ խոստմնազանցութիւնն
և ոչ ալ անշուշտ տրուած խոստմունքի մը կա-
տարումն օրէ օր ձգձգելը՝ գովելի գործ մը կըր-
նայ ըսուիլ, և թէ հետեւաբար պէտք եմ յարգել
և գործադրել ինչ որ խոստացայ իրենց երեք ամիս ա-
ռաջ. (1906, Մարտ. էջ 103. ծանօթութիւն):

Այդ ժամանակ՝ որ և իցէ լինկերութեան մը յառաջագէմ չըլլալուն
պատճառներուն վրայ կը խօսէի, ուստի զարմանք չէ՝ որ շատեր իրենց
գիրքնց շահագրգիռ ցուցնէին և ցուցնեն, քանի որ ազգիս մէջ բաւական ստուար

խումբ մը՝ ուղղակի և կամ անուղղակի կերպով՝ որ և է Լինկերութեան մը կը պատահանին, և Լինկերութիւն ըսելով՝ դուրս չեմ հաներ նաեւ պաշտօնական կամ վարչական մարմինները, դպրոցները, վանքերը, ընթերցարանները, և ուրիշ նման կազմակերպութիւնները, որոնք նիւթական և կամ բարոյական միացած ուժերով՝ սեփական նպատակի մը կը ծառայեն, յարենման այն յատկապէս Բնկերոյիւն կոչուածներուն, որոնք այդպիսի տիտղոսով ճանչցուած են մարդիկներէ:

Վերոյիշեալ թուականին գրածիս մէջ, առանց բացայայտ ըսելու, դիտել տուեր էի՝ որ Լինկերութեան մը չգարգանալուն և կաղ ի կաղ ընթանալուն պատճառները կրնան երկու դասակարգի վերածուիլ, այսինքն՝ ներքին և արտաքին պատճառներ. առաջիններով՝ հասկնալ կ'ուզեմ այն պատկասութիւնները՝ որոնք կապակցեալ են Լինկերութեան մը կազմակերպութեան հետ, զոր օրինակ՝ նպատակը, միջավայրը, ձեռք առնուած միջոցները, օրէնսդրութիւնը, և այլն. երկրորդներով՝ նշանակել կ'ուզեմ այն թերութիւնները՝ որոնք Լինկերութեան կազմակերպութեան անկախ՝ յառաջ կու գան Լինկերութիւնը կազմող անձանց կամքէն ու գործելու եղանակէն:

Եթէ Լինկերութեան մը յետադիմութեան պատճառները ներքին են, այդ Լինկերութիւնը քայքայմանէ ազատելու ուրիշ միջոց չկայ՝ բայց եթէ հիմնական բարեփոխութիւն մը, յետ խոհուն վերաքննութեան՝ պակասը լրացնելով և աւելորդն յապաւելելով, և այսպէս՝ համաձայնեցնելով գործելու կարգաւորութեան ոճը՝ այն նպատակին և միջոցներուն՝ որ ժամանակէն և միջավայրէն իրաւացի կերպով կը պահանջուին: — Եւ այս եղած է վերոյիշեալ թուականին ինչո՞ւ կը կարգաւորութեան նպատակը. (Տես էջ 97):

Իսկ եթէ Լինկերութեան մը ներքին կազմակերպութիւնն և օրէնսդրութիւնն ըստ ամենայնի համաձայն են ժամանակէն պահանջուած պէտքերուն, և յետադիմութեան կամ քայքայման պատճառներն միայն ար-

տաքին են, այդ Լինկերութիւնը վերանորոգելու և իր օգտաւէտ գործունէութեան մէջ դնելու համար ուրիշ բան հարկաւոր չէ՝ բայց եթէ ջնջել այդ պատճառները, բարոյական խոցմտանքաւոր և խիստ վերաքննութեան մ'ենթարկելով զանոնք: — Այս դարմանը ցոյց տալու շատ դիւրին բան մ'է՝ և ամենուն ալ յայտնի. բայց որքան դժուարին և որքան անյայտ՝ այդ կատարուելիք վերաքննութիւնը: — Եւ այս պիտի ըլլայ ներկայ տողերուս գրութեան նպատակը:

*
**

Վստահ եմ, չկայ մէկն ընթերցողներէս՝ որ դժբախտաբար առիթ ունեցած չըլլայ ցաօց սրտի դիտելու իր պահծու հագուստներուն աւելի կամ պակաս ցեցակերութեան ենթարկուած ըլլալին: Ո՞րն է աւանդաբար և ամենաբնական դարմանը՝ զոր ի գործ կը դնենք այդ ապականիչ փնասակար ճճիներուն դէմ: — Զգեստինս՝ արեւուն ճառագայթից դէմ կամ լուսոյ մէջ դնել, ինչ որ անխափան կը գործադրուի նաեւ յետին իսկ ռամիկ տղիւն:

Այդ ցեցերը, որոնք դիւրութեամբ և քիչ առեւեր մէջ կը ջլատեն և կը քայքայեն՝ այնքան խնամքով և ճարտարութեամբ և երկար ժամանակի մէջ բանուած ազնիւ հիւսուածները, այդ ցեցերը, կ'ըսեմ, իրենց առաջին և սեփական յատկութիւն ունին խաւարասիրութիւնը, միթա՞ն մէջ գործ տեսնելը. կ'առեն այն լոյսը՝ որ բարի գործոց կենսատու է, վասն զի իրենց կատարած գործը չար է, փնասակար և աւերիչ է:

Հիւսուածի նման է Լինկերութիւն մ'ալ, որուն անդամներն իրարու հետ միացած են՝ արդարութեան և իրաւունքի, ճշմարտութեան և սիրոյ բարոյական թելերուն անկուածով. ուստի երբ այդ տեսակ հիւսուածներու թշնամի բարոյական ճճիներ թողուին որ բոյն դնեն և աճին անոնց մէջ, քիչ ժամանակէն այն կը պատահի Լինկերութեան մ'ալ՝ ինչ որ կը հանդիպի ցեցակեր հիւսուածներուն, այսինքն է՝ կը

ջլատուին, կը կտըրտուին, կ'անջատուին իրարմէ այն բարոյական թելերը, որոնք իրարու հետ սերտ հիւսուած կը պահեն լոկերութեան անդամներուն մտքերն ու սրտերը. և ուր չի մնար միութիւն մտքեւրու և սրտերու՝ ինչպէս կրնայ հոն այլ եւս միակ լոկերութիւն ըսուած բանն:

Հարկ է ուրեմն որ ճշմարտութեան օգոյն պայծառութեանն ենթարկենք, արդարութեան արեւուն ճառագայթից տակ դնենք, իրաւունքի թելերով թօթուենք, սիրոյ վրձինով թափ տանք լոկերութեան մը միջէն և քննենք շուտով այդ բարոյական ցեցերը, եթէ չենք ուզեր այդ լոկերութեան անհրաժեշտ քայքայումը:

Էւ սակայն ամենամեծ դժուարութիւնը նոյն իսկ այն բանին մէջ է՝ որ հեշտօրէն կարելի չէ նշմարել այդ ծածկասէր, սահուն, սողոսկուն, ճապկըտուն բարոյական ցեցերը, որոնք իրենց նիւթական եղբայրակիցներուն նման՝ խաւարի մէջ ապրիլ կը սիրեն, մութի մէջ թագուն կեանք կը վարեն, միանձնացեալ և լուռումունջ կեանքի մը կեղծիքին ներքեւ՝ իրենց աւերիչ գործը կը շարունակեն: Շատ ճարտար են այդ տեսակ ցեցերը զիրենք փրնտուելու և քննելու պարտականութիւն և պաշտօն և ըսենք նաեւ բարի-կամք ունեցողներուն ոմանց տգիտութենէն օգտուելու, ուրիշներու անձնասիրութենէն, այլոց չարասիրութենէն, բազմաց շահախնդրութենէն և ոչ սակաւուց անկարողութենէն, տատամսութենէն, անհոգութենէն, անխոհեմութե-

նէն, և այլն: — Էւ որովհետեւ նոյն իսկ այս պակասութիւններս ալ՝ եթէ ոչ լոկերութեան՝ այլ անձնական կամ անհատական բարոյական ցեցեր են, ուստի յայտնի բան է՝ որ անձնական ցեցը չի հալածեր և ոչ չնչացնիր լոկերութեան ցեցերը, այլ մանաւանդ ազատ ժամանակ և առատ նիւթ կը մատակարարէ՝ անոնց հետզհետէ զարգանալուն, քանի որ ինքն ալ անոնց գործոյն մէջ կը փնտռէ և կը գտնէ իր սնունդն և յազուրդը:

Հարկ է ուրեմն որ զինուած՝ չարին դէմ ատելութեամբ և սուտին դէմ ճշմարտասիրութեամբ՝ մանրագնին դիտակով հետազօտենք և երեսան հանենք այդ տեսակ որդերուն նկարագիրը, հրապարակենք՝ լուսանկարելով անոնց ստոյգ դիմագիծը՝ իրենց գործերէն նշողած ճառագայթացումով, որպէս զի մեր զգեստներուն համար գործադրուածին հաւասարաբնամ հոգածութեամբ զգուշանանք՝ որ մեր լոկերութիւններուն կազմակերպութիւնն և զարգացումը չենթարկուին այդ մահաբեր ուտիճներուն աւերիչ գործունէութեան:

*
**

Տեղւոյ անձկութիւնն և օգտալից յուածոց առատութիւնը կը ստիպէ զիս յաջորդ ամսաթուին ձգելու առաջադրած նպատակիս կատարումը կամ զբաժ տողերուս շարունակութիւնը:

Հ. Ա. ՏԻՐՈՅԱՆ

Ա Ռ Ա Ն Ք Ն Ա Թ Ն Ե Ա Յ

Ամէն զէն (զեռեմ)՝ մարդոյն խրատ մի է:

Ո՛վ ամառն դատարկ ի շուրջ գայ, ձմեռն աստմի ի վերայ աստաման տայ:

Գիտենանք թէ ի Սողոմոնի մատանին զինչ էր գրած: — Գրած էր բանն ոսկի գրով՝ թէ « Այս էլ անցանէ »:

Փնա՛ հաց տուր՝ թէ անուն կ'ուզես, որ հացն անցանէ՝ անունդ մնայ:

